ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1- 2522 «04» 09 2013թ.

Ձեր 06.08.2013թ. թիվ 2621/1361 գր.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ օգոստոս ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Տավուշի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունների ու խախտումների վերաբերյալ Ձեր գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում և Տավուշի մարզային վարչությունում, որոնց վերաբերյալ ներկայացվում են հետևյալ մեկնաբանությունները.

1. Կալանավորվածներ Կ.Սարգսյանին և Ռ.Զաքարյանին առանց հիմքի ՁՊՎ ընդունելու վերաբերյալ հայտնվում է, որ կալանավորվածներ Կ.Սարգսյանը և Ռ.Զաքարյանը ՁՊՎ են ընդունվել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ներկայացված համապատասխանաբար 15.05.2013թ. թիվ ՏԴ2/0004/13/2013 և 28.11.2012թ. թիվ ՏԴ/0105/01/12 որոշումների հիման վրա, սակայն վերջիններիս ՔԿՀ տեղափոխելիս անձնական գործերի հետ միասին ուղարկվել են նաև նշված որոշումները, իսկ ՁՊՎ-ում չեն պահվել դրանց պատճենները, որոնք հետագայում վերադարձվել են ՁՊՎ:

Այսպիսով, կալանավորվածներ Կ.Սարգսյանին և Ռ.Զաքարյանին առանց հիմքերի ՁՊՎ ընդունելու վերաբերյալ Ձեր մտավախությունը հիմնազուրկ է: Բացի այդ, որևէ իրավական ակտով նախատեսված չէ ՁՊՎ-ում պահման հիմքերի պատճենների պահպանումը ՁՊՎ վարչակազմի մոտ, ուստի դրանց բացակայությունը որպես խախտում չի կարող դիտարկվել:

2. ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու կապակցությամբ հայտնվում է, որ 01.06.2013թ.ոստիկանության Տավուշի բաժնի պետ Գ.Դալլաքյանի և <<Վիոլետա-Վիտեն>> ՍՊԸ տնօրեն Ա.Մայիլյանի միջև կնքվել է պայմանագիր, որը դիտորդների այցելության ժամանակ գտնվել է բաժնի հաշվապահությունում, այդ իսկ պատճառով հնարավոր չի եղել անմիջապես այն տրամադրել խմբի անդամներին:

մուտքագրված է
վարչություն
մուտք թիվ 527

3. ՁՊՎ-ի շինարարական նորմերի խախտումների վերաբերյալ հայտնվում է, որ ՁՊՎ-ի խցերի պատուհանների, տեսակցության սենյակի միջանկյալ տեսանելիության պատնեշի և սանհանգույցի դռան դիտանցքի ապակիները փոխարինվել են օրգանական ապակիներով, իսկ լոգարանում տեղադրված լոգախցիկը ամբողջությամբ ապամոնտաժվել և փոխարինվել է ցնցուղով:

Ինչ վերաբերվում է խցերի պատուհանների՝ երկու կողմից վանդակաճաղերով արգելափակված լինելու պատճառով չբացվելուն, ապա դրանք ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 116-րդ և 117-րդ կետերի պահանջների համաձայն դրսի կողմից պատված են մետաղյա վանդակաճաղերով, իսկ խցերի կողմից ապակիները պաշտպանվում են մետաղյա ցանցով, որոնք չեն խանգարում պատուհանների այնչափ բացվելուն, որքան հարկավոր է խցերի օդափոխության համար:

Տեսակցության սենյակը ամբողջությամբ կահավորվել է անհրաժեշտ գույքով, բուժսենյակի և սննդի տաքացման սենյակի առկա ամբողջ գույքը ամրացվել է հատակին, լոգարանում լվացարանի վերևի մասում առկա բաց հոսանքալարը մեկուսացվել է:

4. Որպես թերություն արձանագրած ՁՊՎ-ի 1-ին խցի սպիտակեղենը կեղտոտ վիճակում գտնվելու վերաբերյալ հայտնվում է, որ ՁՊՎ վարչակազմը ընդունել է նշված թերությունը և վերացրել այն:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ների վերաբացման կամ շահագործման հանձնելու գործընթացներին դիտորդների խմբի մասնակցությանը, ապա ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգով, ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանով և ՁՊՎ-ների գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով նման կարգ նախատեսված չէ:

**պետ, ոստիկանության գեներալ-մայոր** **Վ. Եղիազարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1361 06.08.2013թվ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏՍՈՒ
ՄՏԻՑ № 3411
07 08 2013 թ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի օգոստոս ամսին այցելության կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Տավուշի ՁՊՎ արձանագրել է, մի շարք թերություններ և խախտումներ:

Դիտորդական խումբը միաժամանակ արձանագրել է, որ մայիս ամսին վերաբացված տվյալ ՁՊՎ-ն ունի շինարարական նորմերի լուրջ խախտումներ:

*Թերություններ՝*

✓ 24.07.2013թ-ից մինչ Դիտորդական խմբի այցելությունը /օգոստոսի 2-ը/ ՁՊՎ-ում ոչ մի անձ չի պահվել, բայց ՁՊՎ-ի առաջին խցի սպիտակեղենը՝ սրբիչով գտնվում էին կեղտոտ վիճակում, որի վերաբերյալ վարչակազմը չկարողացավ ոչ մի մեկնաբանություն տալ: */կից ներկայացվում է լուսանկարներ – 1,2/*

5231
07 08 13

*Խախտումներ՝*

✓ Բացման օրվանից մինչ այցելության օրը, ՁՊՎ-ում պահվել են 2 կալանավորված անձիք Կարեն Անդրանիկի Սարգսյանը և Ռոման Ռոբերտի Զաքարյանը: ՁՊՎ-ում բացակայում էին նշված անձանց ՁՊՎ ընդունելու հիմքերը: Արդյունքում՝ երկու կալանավորված անձիք էլ ՁՊՎ էին ընդունվել առանց հիմքերի և տվյալ փաստը, որ անհարեժշտ հիմքերը բացակայել են ՁՊՎ-ից հաստատված է ՁՊՎ-ի ոստիկանի ստորագրությամբ՝ Դիտորդական խմբի արձանագրությունում:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

- ✓ Դիտորդական խմբի այն հարցադրմանը, թե սնունդը ինչ ձևաչափով է տրամադրվում, մեկնաբանեցին, որ պայմանագիր է կնքվել, ինչ որ սննդի կետի հետ, սակայն կնքված պայմանագիրը չկարողացան տրամադրել Դիտորդական խմբին:

*Շինարարական նորմերի խախտումներ՝*

1. Խցերի պատուհանները պատրաստված են՝
   - ✓ Ապակուց
   - ✓ Պատուհանների ապակիները թափանցիկ չեն, որը խոչընդոտում է բնական լուսավորության ներթափանցմանը
   - ✓ Խցերի պատուհանները երկու կողմից էլ վանդակաճաղերով արգելափակված են
   - ✓ Խցի պատուհանները չեն բացվում՝ վանդակաճաղերի պատճառով: */կից ներկայացվում է լուսանկար – 3,4,5/*
2. ՀՊՎ-ների խցերը չունեն օդափոխության համակարգ:
3. Տեսակցության սենյակը՝
   - ✓ Մի կողմից կահավորված չէր համապատասխան գույքով */կից ներկայացվում է լուսանկար – 6/*
   - ✓ Մնջանյալ տեսանելիության պատնեշը ապակուց էր, այլ ոչ թե օրգանական ապակուց: */կից ներկայացվում է լուսանկար – 6/*
4. Սանհանգույց՝
   - ✓ Դռան վրա նախատեսված տեսանելության դիտանցքը ապակուց էր, այլ ոչ թե օրգանական ապակուց
   - ✓ Լվացարանի վերևի մասում առկա էր հոսանքալար՝ բաց վիճակում և անհայտ էր թե ինչ նպատակով */կից ներկայացվում է լուսանկար – 7/*
   - ✓ Լոգանքի համար տեղադրված է լոգախցիկ, որը ամբողջությամբ ապակուց էր, այլ ոչ թե օրգանական ապակուց: */ կից ներկայացվում է լուսանկար – 8/*
5. Բուժսենյակում առկա գույքից ոչինչ ամրացված չէր հատակին: */կից ներկայացվում է լուսանկար – 9,10/*
6. Ճաշասենյակի գույքը նույնպես ամրացված չէր հատակին: */կից ներկայացվում է լուսանկար – 11/*

Նշված թերությունները բացառելու նպատակով, ցանկալի կլիներ մինչ ՀՊՎ-ի վերաբացումը հետազոտություն իրականացնող հանձնաժողովի կազմում, ինչպես դա եղել է նախկինում, լինեին նաև Դիտորդական խմբի անդամները, որպեսզի բացառվեր նման թերությունները:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և միջոցներ ձեռնարկել դրանց ուղղությամբ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org